բռնաւորքն. չասէք թէ չլսեցաք: Եւ յետնուցս քշեց զքեհեապէկն:

Եչի օր (17 Յունուար) թագաւորն զՔէչէճիօղլին[1] սպանեց և զՀայտարզատէն ևս սպանեց, և զմուֆտին ի Պուրսայու քշեց յայլ վատ տեղ մի. եւ որ ասացին թէ սպանեց՝ նա՛ սուտ էր, այլ ի Պուրսա քշեցին եւ օրս այլ ի ներս քշեցին:

Եւ օրս սիւնհոդոս արարեալ ի յԱատուածածնին Աչատուր վարդապետն և Մարտիրոս վարդապետն, Իգնատիոս վարդապետն եւ Կիրակոս վարդապետն, Աչատուր եպիսկոպոսն և Ղազար վարդապետն ի մէջ մեծամեծաց քաղաքիս եւ աթոռակալաց. եւ կարգալ եառն զԹուղթն կաթողիկոսին. եւ էր գրեալ թէ Քաղաքիդ բանն հանապազ այդպէս է, ես ի՛նչ առնեմ: Դուք հրաման ունիք ի թագաւորէն որ սեւագլուխ չը նստուցանէք այսուհետև. մի՛ նստուցանէք և ձեր իշխանաց ձեռն լինի եկեղեցիքն, որպէս և էրն յառաջագոյն. և թէ խնդրէք թէ յաստուստ յայդուստ[2]) ձեզ քարոզիչ՝ առաքեցից զով որ կամենաք: Եւ ես չգիտեմ զի՛նչ ասացից. ահա՛ Դ տարի է որ կայր ի միջի ձեր, մի բան չկար. այս Դ ամսուս մէջն զի՛նչ եղև որ այդպէս եղև: Ծնընդենէն մինչև ցայժմ Դ թուղթ եկաւ, չգիտեմ թէ ի՛նչ պատասխան տայցեմ, զի միմեանց չի համեմատիր: Զայս թուղթ կարդացին եւ արարին իրաւունք թէ Մեք ամենայն վարդապետքս տեղեկացեալ չարութեան Մուղնեցոյն և արարաք դատաստան և բազում վկայութք հաստատեցաւ չարութիւն նորա և արժանի եղև նզովելոյ ի կարգէ վարդապետութեան և ի քրիստոնէութենէ՝ և ոչ նզովեցաք, և առեալ զիր գրեցաք կաթողիկոսին զեղեալ իրսն և զչարութիւնն նորին՝ թէ ինքն զնա

1) քէչէճիօղլի. 2) յայդրուստ.